«ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնահատող հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26-1/26.12.23

Մ10Գ2Կ տեսակի շարժիչի յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում 26.12.2023թ. ժամը 11^{00} –ին:

Նիստին մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Է.Սանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,
Հանձնաժողովի նախագահի տեղակալ
Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ
Հանձնաժողովի անդամներ՝
Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ
Ե.Բաղդասարյան–ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով
Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ
Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ
Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Հանձնաժողովի քարտուղար՝
Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. Մ10Գ2Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղի ձեռքբերման գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝7, դեմ՝0:

Կայանի արտադրական կարիքների և տրանսպորտի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ձեռք բերել շարժիչի յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2024թ. առաջին եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով (զեկուցագիր № 88,01.12.2023թ.):

Մ10Գ2Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է ՀՋ-ՊԸ-ՇՅ-26/**26.12.23** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու

հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
Մ10Գ$_2$Կ տեսակի շարժիչի յուղ	լիտր	410	ՀրազՋԷԿ ԲԲԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ	1600 դր, ներառյալ ԱԱՀ-ն
	լիտր	410	ՀրազՋԷԿ ԲԲԸ	2. Մոսէսքո ՍՊԸ	1550 դր, ներառյալ ԱԱՀ-ն
	լիտր	410	ՀրազՋԷԿ ԲԲԸ	3. Արման Օիլ ՍՊԸ	1750 դր, ներառյալ ԱԱՀ-ն

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխանող և նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

1. ՀՋ-ՊԸ-ՇՅ-26/26.12.23 ծածկագրով Մ10Գ$_2$Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «Մոսէսքո» ՍՊԸ-ին:

2. Կնքել պայնամագիր «Մոսէսքո» ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1550 դրամով՝ներառյալ ԱԱՀ-ն, 410 լիտր շարժիչի Մ10Գ$_2$Կ տեսակի յուղի ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝7, դեմ՝0:

Է. Սանամյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան